Funded by the European Union

ԵՄ-ն հանուն երիտասարդների. Ուսանողական ժողովրդավարությունը հիմա

Իրականացման ժամանակահատված: 01.02.2021 - 31.01.2024

ԱլԳ երկրներ:

Armenia

Ընդհանուր բյուջե: € 500 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Eurasia Partnership Foundation, Armenia (EPF Armenia)

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/EPFArmenia

Նախագծի կայքէջ: epfarmenia.am/project/EU4Youth-Student-Democracy-Now

Նախագծի նկարագրություն:

«ԵՄ-ն հանուն երիտասարդների. Ուսանողական ժողովրդավարություն հիմա» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Հայաստանում Եվրասիա համագործակցության հիմնադրամը (ԵՀՀ-Հայաստան), «Ռեստարտ» գիտակրթական բարեգործական հիմնադրամի («Ռեստարտ» հիմնադրամ) և Հայաստանում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ-Հայաստան) հետ կոնսորցիումի շրջանակներում իրականացնում են նախագիծը 2021 թ. փետրվարի 1-ից: Ծրագրի տևողությունը 36 ամիս է, որի ընդհանուր բյուջեն կազմում է 500,000 եվրո:

«ԵՄ-ն հանուն երիտասարդների.Ուսանողական ժողովրդավարությունը հիմա» ծրագիրը նպատակ ունի պաշտպանելու երիտասարդների իրավունքները, ինչպես նաև ուժեղացնելու ուսանողների և ուսանողական կազմակերպությունների կարողությունները՝ հանրային գործերում նրանց ներգրավմանը խրախուսելով:

Ծրագիրն անդրադառնում է մարտահրավերների լայն շրջանակի, որոնց հետ բախվում են հայ երիտասարդները, սկսած ուսանողական խորհրդի մանդատների և գործառույթների մասին իրենց անտեղյակությունից, մինչև իրենց՝ նոր կրթական համակարգի զարգացմանն ուղղված քաղաքականության քննարկումներին և մշակմանը նշանակալի մասնակցությունից: Խոսքը վերաբերում է այնպիսի կրթական համակարգին, որը նպաստում է ակտիվ քաղաքացիական դիրքորոշմանն, հաշվի է առնում ուսանողների ձայնը՝ որպես կրթական

Ակնկալվող արդյունքներ:

Ակնկալվող արդյունքները

•Ուսանողների, ուսանողական կազմակերպությունների և երիտասարդական ՔՀԿ-ների կարողությունների բարձրացում՝ քննադատական մտածողության, կազմակերպական և սոցիալական հմտությունների, ինչպես նաև ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների ոլորտներում: Ավելի քան 400 երիտասարդներ, ներառյալ ուսանողներ և ուսանողական կազմակերպություններ կընդլայնեն իրենց գիտելիքներն ու հմտությունները կազմակերպչական զարգացման, ջատագովության/ադվոքասիի, իրավունքի պաշտպանության, համալսարանի մասնակցային կառավարման և ուսանողակենտրոն կրթության մշակման ոլորտներում: Վաթսուն երիտասարդներ Հայաստանի բոլոր մարզերից կուսուցանվեն՝ ինչպես զարգացնել առցանց և օֆլայն գործիքներն, որոնք կխթանեն ուսանողական ինքնակազմակերպման նոր և նորարարական ձևերին, կրթությանը, քաղաքացիական ներգրավմանը, համալսարանի կառավարման մասնակցությանը, որոշումների կայացմանը և քաղաքականությունների զարգացմանը: Կմշակվեն 3-5 նորարարական էլեկտրոնային գործիքներ՝ ուսանողական ինքնակազմակերպման որակի բարձրացման, համալսարանների թափանցիկության, հաշվետվողականության և ուսանողների՝ ջատագովության/ադվոքասիի, քաղաքականությունների մշակման և համալսարանական կառավարմանը մասնակցելու համար: Մարզային համալսարաններից 150-200 ուսանողներ, երիտասարդ ակտիվիստներ և ուսանողական, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ